ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/253

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Մասնակից՝ «Մովսեսյան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՊԵԿ-ՀԲՄ-ԱՊՁԲ-20/3» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, համակարգչային տեխնիկայի և համակարգչային օժանդակ նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16234-2020 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 23.10.2020թ.-ի թիվ 1/18-2/67790-2020 գրության հիման վրա, 27.10.2020թ.-ին «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 27.10.2020թ.-ին:

28.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/253 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.11.2020թ.-ին:

2. **<u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>**.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 23.10.2020թ.-ի թիվ 1/18-2/67790-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով համակարգչային տեխնիկայի և համակարգչային օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է ՊԵԿ-ՀԲՄ-ԱՊՁԲ-20/3 ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին հայտ է ներկայացրել նաև «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ն: ՊԵԿ-ՀԲՄ-ԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովը հայտերի ուսումնասիրության արդյունքում «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ և համաձայն ՊԵԿ-ՀԲՄ-ԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և դրա մասին համակարգի միջոցով տեղեկացրել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով չի ներկայացրել շտկված տարբերակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեզ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՊՁԲ-20/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մովսեսյան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «**Մովսեսյան**» **ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 28.10.2020թ.-ին գրությամբ դիմել է «Մովսեսյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16234-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով 20.11.2020թ.-ին հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 28.10.2020թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«28.10.2020թ.-ին ԷՓ միջոցով ստացված Ձեր գրությանն ի պատասխան հայտնում եմ հետևյալը:

Մովսեսյան ՍՊԸ-ն մասնակցել է ՊԵԿ-ՀԲՄ-ԱՊՁԲ-20/3 ծածկագրով ընթացակարգին:

14.10.2020թ.-ին, համակարգի միջոցով ստացվել է գնահատող հանձնաժողովի նամակը այն մասին որ Հավելված N 1-ում, Հավելված N 1,1-ում և Հավելված N 2-ում մասնակիցը սխալ է նշել գնման ընթացակարգը՝ մասնավորապես հրատապ բաց մրցույթի փոխարեն նշել է գնանշման հարցում, և առաջարկվել է 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ուսումնասիրելով ներկայացված հայտը, պարզել ենք, որ իրոք՝ բաց մրցույթի փոխարեն, Մովսեսյան ՍՊԸ-ի հայտի բոլոր հավելվածներում, այդ թվում՝ գնային առաջարկում նշել է գնանշման հարցում:

Ելնելով այն իրողությունից, որ Մովսեսյան ՍՊԸ-ն ըստ էության ներկայացրել է հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտ, քանի որ գնային առաջարկում նույնպես սխալ է նշվել ընթացակարգի անվանումը, ուստի գտել ենք, որ այն ենթակա չէ շտկման, քանի որ ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ սահմանված է հետևյալը.

40. Հայտերի բացման նիստում՝

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ելնելով վերը մեջբերված իրավակարգավորումներից, պարզ է դառնում, որ նախ՝ Մովսեսյան ՍՊԸ-ի ներկայացված հայտը ենթակա չէ շտկման, այլ պետք է մերժվեր հանձնաժողովի կողմից, քանի որ այն չեր համապատասխանում հրավերի պահանջներին, և երկրորդ՝ գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում՝ 08.10.2020թ.-ին, անհամապատասխանություն արդձանագրելու դեպքում՝ պետք է կասեցներ նիստը, և նույն օրը ծանուցում ուղարկեր, առաջարկելով շտկել անհամապատասխանությունը, այնինչ՝ գնահատող հանձնաժողովը ծանուցումը ուղարկել է ոչ թե հայտերի բացման նիստի օրը, այլ դրանից հինգ օր անց՝ 14.10.2020թ.-ին:

Ելնելով վերոգրյալից, պարզ է դառնում, որ Մովսեսյան ՍՊԸ-ն չի խախտել գնումների ընթացակարգի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որը կարող էր հիմք հանդիսանալ Մովսեսյան ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար, դեռ ավելին՝ չնայած հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտի հիման վրա, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված ակնհայտ անհիմն պահանջին, Մովսեսյան ՍՊԸ-ն 16.10.2020թ-ին

գրավոր դիմել է հանձնաժողովին և հայտնել, որ պատրաստ է կնքել պայմանագիր, եթե ներկայացված փաստաթղթերի հիման վրա ճանաչվի որպես ընտրված մասնակից, ստանա պայմանագիր կնքելու առաջարկ, և հանձնաժողովի որոշումը չբողոքարկվի այլ մասնակիցների կողմից և չբեկանվի»:

Ելնելով վերոգրյալ ամբողջից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնած 27.10.2020թ. թիվ 26/26-1/16234-2020 ընթացակարգը, և Մովսեսյան ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

4. **<u>ՍՑ-LO</u>**-2020/253 **<u>ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգչային տեխնիկայի և համակարգչային օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով 22.09.2020թ.-ին հայտարարվել է «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՊՁԲ-20/3» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մովսեսյան» ՍՊԸ-ն:

iii. «Մովսեսյան» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածում՝ դիմում-հայտարարությունում և թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում գնման ընթացակարգի տեսակը նշվել է՝ գնանշման հարցում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.10.2020թ.-ին կայացված նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն Հավելված N 1-ում, Հավելված N 1.1-ում և Հավելված N 2-ում մասնակիցը սխալ է նշել գնման ընթացակարգը՝ մասնավորապես հրատապ բաց մրցույթի փոխարեն նշել է գնանշման հարցում:

Հանձնաժողովը, քննարկելով «Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի համապատասխանությունը հրավերի պահանջների նկատմամբ, արձանագրել է, որ չնայած Հավելված N 2-ում՝ գնային առաջարկում մասնակիցը սխալ է նշել գնման ընթացակարգը՝

հրատապ բաց մրցույթի փոխարեն նշել է գնանշման հարցում, սակայն գնահատող հանձնաժողովը կարողանում է նույնականացնել մասնակցին, գնման ընթացակարգի ծածկագիրը, չափաբաժինը, գնման առարկայի անվանումը և պատվիրատուի անվանումը, որպիսի պայմաններում «հրատապ բաց մրցույթ»-ի փոխարեն նշված «գնանշման հարցում»-ը չի դիտում էական նշանակություն ունեցող անհամապատասխանություն: Հանձնաժողովը հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն 6-րդ չափաբաժնի համար ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ՝ որոշել է «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը չմերժել:

v. Նույն արձանագրության համաձայն՝ գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ղազարյանը armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 14.10.2020թ.-ին Մասնակցի computerlend@mail.ru էլ. հասցեին է ուղարկել արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին ծանուցում (այսուհետ նաև՝ Ծանուցում): Ծանուցման համաձայն՝ հայտերի ուսումնասիրության արդյունքում «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ Հավելված N 1-ում, Հավելված N 1.1-ում և Հավելված N 2-ում մասնակիցի կողմից սխալ է նշվել գնման ընթացակարգը՝ հրատապ բաց մրցույթի փոխարեն նշվել է գնանշման հարցում, ինչով պայմանավորված Մասնակցին առաջարկվել է Ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

անհամապատասխանությունը և վերը նշված փաստաթուղթը ուղարկել գնումների համակարգողի էլ. փոստին՝ gurgen_ghazaryan@taxservice.am հասցեով:

Միաժամանակ Մասնակցին հիշեցրել են, որ Ընթացակարգի հրավերի 8.10 կետի համաձայն՝ եթե մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

vii. Հանձնաժողովի 16.10.2020թ.-ին կայացված նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով չի ներկայացրել հայտում տեղ գտած անհամապատասխանության շտկված տարբերակը:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16234-2020 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ա», «դ» և «զ» պարբերությունների համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու

գրավոր դիմում, գնային առաջարկ, ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից համակարգչային տեխնիկայի և համակարգչային օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով 22.09.2020թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը

հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից համակարգչային տեխնիկայի և համակարգչային օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով 22.09.2020թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՊՁԲ-20/3» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մովսեսյան» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածում՝ դիմում-հայտարարությունում և թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում գնման ընթացակարգի տեսակը նշվել է՝ գնանշման հարցում: Հանձնաժողովի 14.10.2020թ.-ին կայացված նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում Հավելված N 1-ում, Հավելված N 1.1-ում և Հավելված N 2-ում սխալ է նշել գնման ընթացակարգը՝ մասնավորապես հրատապ բաց մրցույթի փոխարեն նշել է գնանշման հարցում: Սակայն Հանձնաժողովը քննարկելով «Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի համապատասխանությունը հրավերի պահանջների նկատմամբ, արձանագրել է, որ չնայած Հավելված N 2-ում՝ գնային առաջարկում մասնակիցը սխալ է նշել գնման ընթացակարգը՝ հրատապ բաց մրցույթի փոխարեն նշել է գնանշման հարցում, սակայն գնահատող հանձնաժողովը կարողանում է նույնականացնել մասնակցին, գնման ընթացակարգի ծածկագիրը, չափաբաժինը, գնման առարկայի անվանումը և պատվիրատուի անվանումը, որպիսի պայմաններում «հրատապ բաց մրցույթ»-ի փոխարեն նշված «գնանշման հարցում»-ը չի դիտում էական նշանակություն ունեցող անհամապատասխանություն: Հանձնաժողովը հաշվի առնելով նաև այն անգամանքը, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն 6-րդ չափաբաժնի համար ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ՝ որոշել է «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը չմերժել: Նույն արձանագրության համաձայն՝ գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Մասնակցին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչի մասին գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ղազարյանը armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 14.10.2020թ.-ին Մասնակցի computerlend@mail.ru էլ. հասցեին է ուղարկել արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին ծանուցում, առաջարկելով՝ ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Հավելված N 1-ում, Հավելված N 1.1-ում և Հավելված N 2-ում մասնակիցի կողմից թույլ տրված անհամապատասխանությունը և դրանք ուղարկել gurgen_ghazaryan@taxservice.am

էլ. փոստի հասցեով: Հանձնաժողովի 16.10.2020թ.-ին կայացված նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակոցվ չի ներկայացրել հայտում տեղ գտած անհամապատասխանության շտկված տարբերակը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործրնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող,

կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում Հավելված N 1-ում, Հավելված N 1.1-ում և Հավելված N 2-ում սխալ է նշել գնման ընթացակարգի ձևը, այն է՝ հրատապ բաց մրցույթի փոխարեն նշել է գնանշման հարցում: Սակայն Հանձնաժողովը

քննարկելով «Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի համապատասխանությունը հրավերի պահանջների նկատմամբ, արձանագրել է, որ Հավելված N 2-ում՝ գնային առաջարկում մասնակիցը սխալ է նշել գնման ընթացակարգի ձևը, սակայն սույն պարագայում հնարավոր է նույնականացնել մասնակցին, գնման ընթացակարգի ծածկագիրը, չափաբաժինը, գնման առարկայի անվանումը և պատվիրատուի անվանումը, որպիսի պայմաններում վերոնշյալ խախտումը չի դիտարկվում որպես էական նշանակություն ունեցող անհամապատասխանություն, ինչով պայմանավորված «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը չի մերժվել Հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովը, այնուամենայնիվ, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցել Մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել Հավելված N 1-ում և Հավելված N 1.1-ում առկա այն նույն անհամապատասխանությունները, որն առկա է եղել նաև Հավելված N 2-ում:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը կիրառելով Կարգի 41-րդ և գնման ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետերը, այն է՝ ծանուցել է Մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել Հավելված N 1-ում և Հավելված N 1.1-ում առկա անհամապատասխանությունները, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Հավելված N 1-ում, Հավելված N 1.1-ում և Հավելված N 2-ում սխալ է նշել գնման ընթացակարգի ձևը, իսկ Հանձնաժողովը Հավելված N 2-ում առկա վերոնշյալ խախտումը չի դիտարկել որպես էական նշանակություն ունեցող անհամապատասխանություն և չի մերժել Մասնակցի հայտը, ուստի ելնելով նույն տրամաբանությունից, Հանձնաժողովը պետք է միատեսակ մոտեցում ցուցաբերեր նաև Հավելված N 1-ում և Հավելված N 1.1-ում առկա անհամապատասխանությունների մասով:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժի նրանց ներկայացրած հայտերը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՊԵԿ-ՀԲՄ-ԱՊՁԲ-20/3» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը՝ կիրառելով Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերը, գործել է ոչ իրավաչափ, ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16234-2020 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/253 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**